ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճաշենի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ Լճաշեն համայնքի «ՄԱՆՉՈՒԿ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար

ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի «ՄԱՆՉՈՒԿ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրենը՝

ա) իրականացնում Է նախադպրոցական ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը.

բ) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման համար:

գ) պատասխանատու է հաստատություն հաճախող սաների առողջության պահպանման,կադրերի ընտրության Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման համար,ինչպես նաև օրենքով և համապատասխան կազմակերպության կանոնադրության սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար

դ) լիազոր մարմին է ներկայացնում նախադպրոցական ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական հաշվետվությունը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը.

ե)կազմում է ուսումնական հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և ներկայացնում համապատասխան լիազորված մարմնի հաստատմանը.

զ) լիազոր մարմնի հավանությանն է ներկայացնում նախադպրոցական ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած ձևաչափի և պահանջների համաձայն

է) իրականացնում է օրենքով և նախադպրոցական ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

- Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն գործունակ քաղաքացիները ովքեր ունեն՝

1) բարձրագույն կրթություն

2)հանրային ծառայության առնվազն 5 տարվա ստաժ կամ 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պահանջները

3) <<Նախադպրոցական կրթության մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չափանիշները բավարարող անձը

4)Տնօրենի պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրության և այլ իրավական ակտեր)

- Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ
5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն
6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն
Մրցույթին մասնակցելու համար դիմող ՀՀ քաղաքացիները Լճաշենի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
1) դիմում
2) մեկ լուսանկար 3x4 չափսի
3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին
4) ինքնակենսագրություն
5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք ՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրված վկայականի)պատճենները
6) տեղեկանք մշտական բնակության վայրից
7) հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)

- Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ
2) տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևե մեկով
3) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն
4) դատապարտվել է հանցագործության կատարման համար և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ
5) զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից կամ օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել:
6) Ներկայացրել է փաստաթղթեր ,որոնք չեն համապատասխանում սահմանված պահանջներին,լրիվ չեն կամ թերի են:
7) 65 տարին լրացած քաղաքացիները
Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթերով՝ բնօրինակների հետ միասին : Փաստաթղթերն ընդունվում են մինչև ս/թ Նոյեմբերի 10-ը ամեն օր, ժամը 9:00-ից մինչև 18:00՝ բացի շաբաթ, կիրակի օրերից՝ Լճաշենի համայնքապետարան /հասցե գ. Լճաշեն 2-րդ փողոց 24 շենք, հեռախոս՝0261-2-74-17/
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2021թվականի Նոյեմբերի 26-ին ժամը 11:00-ին Լճաշենի համայնքապետարանի շենքում

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2021թվականի նոյեմբերի10 -ը ժամը 18:00-ն:

Լճաշենի համայնքապետարան